ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏ

«8» փետրվարի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-04/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Մաժէվ» ՍՊԸ-ի 22.01.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Մաժէվ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Մաժէվ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 22.01.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար շրջանակային համաձայնագրով «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրի շրջանակներում «Մաժէվ» ՍՊԸ-ն մասնակցել է քիմիական նյութերի գնման ընթացակարգին:

Նույն ընթացակարգի շրջանակներում «Հրավերի որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» բաժնի 2.3 կետի «Մասնագիտական փորձառություն»

չափանիշի գնահատման մասի 1-ին ենթակետով սահմանված է. *«Նմանատիպ են համարվում քիմիական նյութերի **կամ** լաբորատոր պարագաների մատակարարումը:»*

Ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը հայտարարված հրավերի 11-րդ չափաբաժնի (ԴՆԹ/ՌՆԹ էքստրակցիայի հավաքածու) մասով ճանաչվել է ամենացածր գնային առաջարկ ներկայացրած ընկերություն:

Ընթացակարգի շրջանակներում հրավերով նախատեսված կարգով, Ընկերության կողմից, որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման շրջանակներում, որպես նմանատիպ մատակարարման գործարք ներկայացրել է ներքոհիշյալ ընթացակարգերի շրջանակներում մատակարարման պայմանագրերը, հանձնման ընդունման ակտերը և հաշիվ ապրանքագրերը:

Մասնավորապես, 2015թ-ին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ՊՆ կարիքների համար **քիմիական** նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/35 և ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-23/8 հրավերների շրջանակներում «ՄԱԺԷՎ» ՍՊ ընկերության հետ կնքվել են «ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքի գնման N ՇՀԱՊՁԲ-7/35-1» և «ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքի գնման N ՇՀԱՊՁԲ-23/8-2» պայմանագրերը, որոնց համաձայն Ընկերության կողմից մատակարարվել են 16 976 700 ՀՀ դրամ արժողությամբ տարբեր **լաբորատոր պարագաներ**՝ նավթամթերքներում ծծմբի մասնաբաժնի որոշման համար նախատեսված սարքավորում Սպեկտրոսկան-Ս, վառելիքում փաստացի խեժի որոշման համար նախատեսված սարքավորում ՊՕՍ-Վ, նավթամթերքի խտության չափման Արեոմետրներ **և քիմիական նյութեր**՝ վառելիքում ջրի մակարդակը որոշելու համար նախատեսված ջրազգայուն հեղուկ՝ «Պաստա Վլադիկինա», հատուկ նշանակության ավիացիոն հերմետիկներ «Ու 30» և «ՎԻՏԷՖ-1»:

Սակայն Հանձնաժողովը նոյեմբերի 16-ի գրությամբ տեղեկացրել է, որ *«... ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22 ծածկագրով մրցույթին Ձեր ներկայացրած պայմանագրերը չեն համարվում համարժեք, արձանագրվել է թերություն՝ կապված գնման պայմանագրի համանմանության հետ: Առաջարկում ենք մեկօրյա ժամկետում շտկել թերությունը:»*

Ի պատասխան նոյեմբերի 16-ի գրության՝ Ընկերությունը պատշաճ կերպով ներկայացրել է գրավոր պարզաբանում, որը հրապարակվել է նաև նոյեմբերի 17-ին տեղի ունեցած Գնահատող հանձնաժողովի նիստում, սակայն Հանձնաժողովը ոչ միայն

չի ընդունել այն, այլ ավելին՝ սուբյեկտիվ մեկնաբանություններով, նոյեմբերի 17-ի թիվ 5 արձանագրությամբ որոշել է, կասեցնելով գնման ընթացակարգը, Ընկերության կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման շրջանակներում պայմանագրերի և փաստաթղթերի նմանատիպ լինելու մասով պարզաբանման պահանջով դիմել պետական մարմիններին:

Այնուհետև, վերջիններիս կողմից պատասխան ստանալուց հետո 2015թ. դեկտեմբերի 4-ի թիվ 6 արձանագրությամբ կրկին անգամ որոշում է կայացրել կասեցնել ընթացակարգը և կրկին անգամ պահանջել պարզաբանում՝ պատճառաբանելով, որ. *«Պետական մարմիններից ստացված պարզաբանումները գնահատող հանձնաժողովին հնարավորություն չեն տալիս վերջնական որոշում կայացնելու: Ինչի հետևանքով գնահատող հանձնաժողովը որոշեց լրացուցիչ պաշտոնական պարզաբանում ստանալու նպատակով նիստի կասեցման ժամկետը երկարաձգել մինչև տվյալ պարզաբանման ստացումը»:*

2015թ. դեկտեմբերի 9-ին Ընկերությունը ներկայացրել է բողոք Գնումների բողոքարկման խորհրդին՝ պահանջելով դադարեցնել Հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 4-ի թիվ 6 արձանագրությամբ նիստի կասեցման ժամկետը երկարացնելու մասին որոշումը և Ընկերությանը 11-րդ չափաբաժնի մասով ճանաչել հաղթող:

Գնումների բողոքարկման խորհրդը 2015թ. դեկտեմբերի 25-ի թիվ 47/15 որոշմամբ Ընկերության ներկայացրած բողոքը բավարարել է մասնակի՝ դադարեցրել է Հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 4-ի թիվ 6 արձանագրությամբ նիստի կասեցման ժամկետը երկարացնելու մասին որոշումը, իսկ «Մաժէվ» ՍՊԸ-ին «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակրգի 11-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչելու մասին պահանջը մերժել է, քանի որ Գնումների բողոքարկման խորհրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, նման լիազորությամբ օժտված չէ:

Միաժամանակ, Գնումների բողոքարկման խորհրդը, վերլուծելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» իրավանորմերն ու փաստական հանգամանքներն, արձանագրել է, որ Հանձնաժողովը վիճարկվող ընթացակարգի շրջանակներում երկու անգամ նիստը կասեցնելով՝ չի պահպանել գնումների մասին ՀՀ օրենսդրության նորմերը, բացի այդ Հանձնաժողովը

պայմանագրերի համանմանությունը գնահատելիս կարող էր ղեկավարվել ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 69-րդ կետով, համաձայն որի՝ Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

2016թ. հունվարի 13-ին, հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ 47/15 որոշումը, Հանձնաժողովը որոշում է կայացրել դարադրեցնել 04.12.2015թ. թիվ 6 արձանագրությամբ նիստի կասեցման ժամկետը երկարացնելու մասին որոշումը, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը՝ որոշել է մերժել Ընկերության գնման հայտը, քանի որ վերջինիս կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերը չեն բավարարել «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման համար սահմանված պահանջներին:

«Մաժէվ» ՍՊԸ-ն, մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետը, ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011 թվականի N 168-Ն որոշման 29-րդ կետի 9-րդ ենթակետը, նշել է, որ Հանձնաժողովի կողմից կոպիտ կերպով խախտվել է վերոգրյալ նորմերի իմպերատիվ պահանջը, մասնավորապես. Հնաձնաժողովը չի հիմնավորել Ընկերության կողմից «Մասնագիտական փորձառություն» չափանիշին չհամապատասխանելու իր կարծիքը, ավելին՝ Հանձնաժողովը ոչ միայն պետք է նշեր կոնկրետ հիմնավորում, այլ նաև պատճառաբաներ, թե հատկապես ինչու է հանգել այդ հիմնավորմանը և ինչու, և ինչ հիմքով է մերժում Ընկերության կողմից ներկայացված յուրաքանչյուր առանձին փաստաթուղթը:

Գնահատող հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 18-ի թիվ 8 արձանագրությամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները՝ հաղթող ճանաչելով մեկ այլ ընկերության:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետի՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերջինս երաշխավորում է գնումների մասնակիցների հավասարությունը գնման գործընթացում՝ բացառելով այլ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանմանը և կիրառմանը, այդ թվում խտրականության դրսևորմանը: Տվյալ կոնկրետ դեպքում գնահատող հանձնաժողովն, օգտվելով իրեն վերապահված հայեցողական իրավունքից, դրսևորել է խտրական վերաբերմունք Ընկերության նկատմամբ: Ավելին, գնահատող հանձնաժողովը գնման գործընթացում չի ապահովել իր հայեցողական իրավունքի միատեսակ կիրառությունը, դրանով իսկ հաստատելով իր կողմից խտրական վերաբերմունքի առերևույթ դրսևորումը՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետի՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Համաձայն ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011 թվականի N 168-Ն որոշման 29-րդ կետի 9-րդ ենթակետի՝ գնահատող հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Համաձայն 10 փետրվարի 2011 թվականի N 168-Ն ՀՀ կառավարության որոշման 69-րդ կետի՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք

դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

«Մաժէվ» ՍՊԸ-ն գտնում է, որ Հանձնաժողովի կողմից ակնհայտ և կոպիտ ձևով խախտվել են բողոքում նշված ՀՀ օրենսդրության պահանջները, վերջինիս գործողություններն ակնհայտ ոչ իրավաչափ են և չեն բխում գործող օրենսդրության պահանջներից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «Մաժէվ» ՍՊԸ-ն խնդրել է՝

1. դադարեցնել «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2016թ-ի թիվ 7-րդ արձանագրությամբ կայացրած որոշումը՝ «Մաժէվ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով.

2. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2016թ-ի թիվ 8-րդ արձանագրությամբ պայմանագիր կնքելու մասին կայացրած որոշումը, քանի որ պայմանագիր կնքելու դեպքում բողոքը կդառնա առարկայազուրկ և դրանով «Մաժէվ» ՍՊԸ-ին կհասցվեն վնասներ:

3. դադարեցնել «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2016թ-ի թիվ 8-րդ արձանագրությամբ պայմանագիր կնքելու մասին կայացրած որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 27.01.2016թ. ժամը 12:00-ին ԳԲԽ-04/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Մաժէվ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը և մեջբերելով Գնումների բողոքարկման խորհրդի 2015թ. դեկտեմբերի 25-ի թիվ 47/15 որոշումը, հայտնել են, որ Գնահատող հանձնաժողովը պայմանագրերի համանմանությունը

գնահատելիս կարող էր ղեկավարվել ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 69-րդ կետով, համաձայն որի՝ Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

«Մաժէվ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները նշել են, որ Գնահատող հանձնաժողովը չի հիմնավորել Ընկերության կողմից «Մասնագիտական փորձառություն» չափանիշին չհամապատասխանելու իր կարծիքը, ինչով խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետը և ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011 թվականի N 168-Ն որոշման 29-րդ կետի 9-րդ ենթակետը:

Ընկերության ներկայացուցիչները խնդրել են դադարեցնել «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 13.01.2016թ. թիվ 7-րդ արձանագրությամբ «Մաժէվ» ՍՊԸ-ի հայտը մերժելու, 18.01.2016թ. թիվ 8-րդ արձանագրությամբ պայմանագիր կնքելու որոշումները, և որպես ժամանակավոր միջոց կասեցնել «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2016թ. թիվ 8-րդ արձանագրությամբ պայմանագիր կնքելու մասին կայացրած որոշումը:

<u>2. ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ առողջապահության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 27.01.2016թ. թիվ ԱԿ/06.1/1682-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ համաձայն Գնումների բողոքարկման խորհրդի 25.12.2015թ. թիվ 47/15 որոշման՝ դադարեցվել է «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.12.2015թ. թիվ 6-րդ արձանագրությամբ նիստի կասեցման ժամկետը երկարացնելու մասին որոշումը և նույն հանձնաժողովի 13.01.2016թ. թիվ 7-րդ արձանագրությամբ «Մաժէվ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ վերջինիս կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերը չեն բավարարում «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով

գնման ընթացակարգի հրավերում «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման համար սահմանված պահանջներին:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 27.01.2016թ. ժամը 12:00-ին ԳԲԽ-04/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչները պարզաբանել են, որ Գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը մերժել է, քանի որ Ընկերության կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերը համանման չեն հրավերով նախատեսված ապրանքատեսակների մատակարարման պայմանագրերին:

3. ԳԲԽ-04/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-04/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մաժէվ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2016թ. ժամը 17:00-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրության համաձայն. « ... Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը՝ որոշվեց մերժել «Մաժէվ» ՍՊԸ-ի գնման հայտը, քանի որ վերջինիս կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերը չեն բավարարում «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման համար սահմանված պահանջներին ...»:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2016թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 8 արձանագրության համաձայն. « ... Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 50-րդ կետը՝ ընտրված մասնակից հայտարարել հետևյալ կազմակերպություններին.

- «Վիոլա» ՍՊԸ-ին 10-րդ և 17-րդ չափաբաժինների մասով,
- «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին 1-9-րդ և 11-րդ չափաբաժինների մասով, ...»

4. ԳԲԽ-04/16 բողոքը քննող հանձնաժողովը 27.01.2016թ. որոշմամբ բավարարել է «Մաժէվ» ՍՊԸ-ի 22.01.2016թ. բողոքով ԳԲԽ-04/16 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած՝ «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2016թ. թիվ 8-րդ արձանագրությամբ պայմանագիր կնքելու մասին կայացրած որոշումը կասեցնելուն ուղղված որպես միջանկյալ ընթացակարգ՝ ժամանակավոր միջոց կիրառելու մասին միջնորդությունը:

<u>4. ԳԲԽ-04/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Մաժէվ» ՍՊԸ-ի 22.01.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ առողջապահության նախարարության ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը, «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2016թ. ժամը 17:00-ին կայացած նիստի թիվ 7 և 18.01.2016թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 8 արձանագրությունները, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), հայտնում է հետևյալը.

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ ***հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:***

Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Կենտրոնը հայտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2016թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է մերժել «Մաժէվ» ՍՊԸ-ի գնման հայտը, քանի որ վերջինիս կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերը չեն բավարարում «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման համար սահմանված պահանջներին, սակայն հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ չի նկարագրվել, չի հիմնավորվել, թե «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերը որ հատկանիշներով չեն համապատասխանում Հրավերով սահմանված պահանջներին, ինչը հակասում է իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներին:

Ավելին, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է, որ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան ***հայտի մերժման դեպքում*** պետք է պարունակեր ***հայտի մերժման հիմնավորումը***, իսկ Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է, որ հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների հիմնավորվածության համար, ուստի գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 8-րդ հոդվածի հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Արդյունքում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.01.2016թ. ժամը 16:00-ին կայացած նիստում որոշել է ընտրված մասնակից հայտարարել «Վիոլա» ՍՊԸ-ին՝ 10-րդ և 17-րդ չափաբաժինների մասով, «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին՝ 1-9-րդ և 11-րդ չափաբաժինների մասով:

Կենտրոնը հայտնում է նաև, որ Գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-01/16 բողոքը քննող հանձնաժողովի, հայտի մերժման հիմնավորվածության վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել իր 20.01.2016թ. թիվ 01/16 որոշմամբ, որում

արձանագրել է, որ. « ... Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.12.2015թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան, *բացված ծրարներում առկա չեն հրավերով պահանջված փաստաթղթերը կամ փաստաթղթերը կազմված չեն սահմանված պահանջներին համապատասխան*, սակայն, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ չեն նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները, մասնավորապես, թե «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի բացված ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերից կոնկրետ որ փաստաթղթերն առկա չեն եղել կամ որ փաստաթղթերը կազմված չեն սահմանված որ պահանջներին համապատասխան, ինչը հակասում է իրավական որոշակիության և կանխատեսելության պահանջներին, ինչն էլ հանգեցրել է Օրենքի 8-րդ հոդվածի հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտմանը:»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ Ընկերության՝ «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2016թ-ի թիվ 7-րդ և 18.01.2016թ-ի թիվ 8-րդ արձանագրություններով կայացրած որոշումները դադարեցնելու պահանջները ենթակա են բավարարման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Մաժէվ» ՍՊԸ-ի 22.01.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 13.01.2016թ. թիվ 7-րդ և 18.01.2016թ. թիվ 8-րդ արձանագրություններով կայացրած որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ Մ.Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-04/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Դավթյան